


**E  
184  
A7  
A77  
1921  
MAIN**

GIFT OF  
Associated Armenian Students



736  
A728  
h

# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

---

ՔՈՒ ԴԻՐՔԴ ԱՆՈՐ ՀԱՆԴՊ



Պատրաստեց՝

Պ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԸՆԴԻՊԱՆՈՐ ՔԱՐՏՈՒԳԱՐ

1921

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
530 OLD SOUTH BUILDING  
BOSTON 9, MASS.

# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋԱԿԱՆ ԺՈՂՈՎ

## Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Վ. ՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ  
ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՕՆ ՊԷՅ  
Վ. ՄԱԼԷՋԵԱՆ  
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Ատենապետ  
Փոխ-Ատենապետ  
Ատենադպիր  
Գանձապետ

## Խ Ո Ր Հ Ր Դ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ  
Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԷՅ  
ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԲԵԼԷԿԵԱՆ  
ՄԻՀՐԱՆ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

## ՓՈԽ-ԱՆԴԱՄՆԵՐ

ՏՕՔԹ. Ն. ԲԷՋԷՃԵԱՆ  
ԼԵԻՈՆ ԱՍԱՏՈՒՐ  
ՃԱՆԻԿ ԶԱՔԸՐ  
ԷՏ. ՓԱՓԱԶԵԱՆ

Հաշուեցնիչ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ — ՊՈՍԹՈՆ

ՏՕՔԹ. Կ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ  
Ա. Պ. ՍԷԼԵԱՆ  
ՏՕՔԹ. Մ. Կ. ԵԱՐՏԸՄԵԱՆ  
Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ  
ՎԵՐ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ  
ՄԱՂԱՔ ՊԵՐՊԵՐԵԱՆ  
ԲՕԼ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ատենապետ  
Փոխ-Ատենապետ  
Ատենադպիր  
Գանձապետ  
Հաշուակալ  
Խորհրդական

»

Պ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
Ընդհանուր Բարոուդար

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

ԸՍ Ը — Korzhne

ՔՈՒ ԴԻՐՔԴ ԱՆՈՐ ՀԱՆԴԷՊ



Պատրաստեց՝

Պ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ընդհանուր Քարտուղար

1921

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

530 OLD SOUTH BUILDING  
BOSTON 9, MASS.

E184

A7 A77

1921

MAIN

ՀԻՃԱԿԱՑՈՅՑ

ՊՐԱԿ I.

# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

---

«Միութիւնը  
գորութիւն է»:

«Աջակցելով Հ. Բ.  
Ը. Միութեան ծառայում  
ենք Մայր Հայրենիքին»:  
ԳԷՈՐԳ ԱԲԳԱՐ

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

Ա. Հայրենի հողին հաւատարիմ մնացած  
Հայ ժողովուրդին մտաւոր եւ բարոյական գար-  
գացմանը սատարել:

Բ. Անոր նիւթական եւ տնտեսական կա-  
ցութիւնը բարւոյեցնելու աշխատիլ:

Գ. Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող  
որեւէ ձեռնարկ կամ հրատարակութիւն քա-  
ջալերել:

*Հետեւաբար՝ Հ. Բ. Ը. Միութիւնը, յօ-  
ղուտ հայրենի հողին հաւատարիմ մնացած Հայ  
ժողովուրդին, իր հիմնէ կամ նպաստներով  
կ'օժտէ վարժարաններ, որբանոցներ, ընթեր-  
ցարաններ, արհեստանոցներ, աշխատանքի*

տուններ, հիւանդանոցներ, դարմանատուներ, եւ ուրիշ նմանօրինակ ազգային հանրօգուտ հաստատութիւններ: Կ'օգնէ հայրենիքի կարօտ Հայերուն՝ առանց դաւանանքի եւ այլ խտրութեան: Կը պաշտպանէ հողագործը, անոր հայթայթելով հող, սերմնցու, կենդանի եւ դործիք: Կը քաջալերէ դործաւորը եւ տեղական արհեստագործութեանց զարգացումը: Կը տարածէ դիւղատնտեսական արդիական գիտելիքները: Կը ստեղծէ կարօտ համայնքներուն ի նպաստ աշխատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ: Սովէ, հրդեհէ եւ ուրիշ ոեւէ աղէտքէ հայրենաբնակ արկածեալներուն անմիջական օգնութիւն կը հասցնէ:

Մէկ խօսքով, իր միջոցներուն ներած չափով, եւ իր բացորոշ նպատակին սահմանին մէջ, Միութիւնը կ'աշխատի Հայ տարաբախտ ժողովուրդին վիճակը բարւոքելու, հնարաւոր ընելով անոր կրթական զարգացումը եւ տնտեսական բարգաւաճումը:

(Հիմնական Կանոնագիր, Յօդ. 1 եւ 14)

Այս է նպատակը որու համար Հ. Բ. Ը. Միութիւնը ոգի ի բռին կ'աշխատի:

Զե՞ս խորհիր թէ անիկա մեծապէս կը նըպաստէ Ազգիդ բարեկաման:

ՊԻՏԻ ԶՈՒԶԵՍ ՕԳՆԵԼ ԱՆՈՐ:



Հ. Բ. Ը. Միտրեան «Սիսուան» վարժարանի ուսուցչական խումբը

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Գիտե՞ս որ Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Մասնաճիւղեր 1919 Մայիսէն մինչեւ 1921 Ապրիլ 1, Մայր Հայրենիքիդ թշուառութիւնները մեղմելու համար՝ զանազան աղբիւրներով նուիրած են 280,169, 38 տոլար :

Գիտե՞ս զարձեալ որ Նիյր Իսթ Րիլիֆ Ընկերութիւնը հիացած է Հ. Բ. Ը. Միութեան արդիւնաւոր գործունէութեանց վրայ, եւ կատարեալ վստահութեամբ ներշնչուած՝ սոյն կազմակերպութեան միջոցաւ գործածուելու համար նուիրած է 70,000 տոլար, այն խոստումով որ Ամերիկայէն Հ. Բ. Ը. Միութեան միջոցաւ ղրկուած գումարները պիտի կրկնապատկէ :

Նուիրուած այս գումարը աւելցնելով յիշուած գումարին վրայ՝ կ'ունենանք 350,169,38 տոլար :

Այս խոշոր գումարը, քու սիրած ազգիդ բեկորները փրկելու համար նուիրեցին կամ նուիրելու սրատճառ զարձան, նոյն ազգի բախտաւոր եւ հաբազատ զաւակները :

ԴՈՒՆ ԱՆՈՆՅՄԷ ՄԷ՞ԿՆ ԵՍ :

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՆԱԿԸ

Գիտե՞ս որ Հ. Բ. Ը. Միութիւնը 1908ին Ամերիկայի մէջ իր առաջին հիմը դրաւ Պոսթոնի մէջ, հոն կազմելով մէկ Մասնաճիւղ 47 անդամներով: Այժմ սակայն այդ մէկ Մասնաճիւղը բարձրացած է 90 Մասնաճիւղերու, իսկ 47 անդամներու թիւն ալ հասած է 8,000ի: Ասկէ ի զատ յառաջ եկած են չորս Շրջանակներու Յանձնախումբեր եւ Կեդրոնական Յանձնաժողով մը:

Այս բանակի բոլոր մեծ ու փոքր անհատներ առանց ոեւէ խտրութեան իր ջանան վեր բռնել տարաբախտ Ազգիդ փրկութեան դրօշակը:

ԴՈՒՆ ՏԱԿԱԻՒՆ ԵՏ ՊԻՏԻ ՄՆԱ՞Ս:

---

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

Գիտե՞ս որ Հ. Բ. Ը. Միութիւնը շատ մը տարազրեալներու հանդերձեղէնի, սնունդի եւ ուրիշ անհրաժեշտ պէտքերը հոգալէն ի զատ՝ իր ուղղակի խնամքին ներքեւ ունի հետեւեալ հաստատութիւնները որոնց ամբողջական հոգը իր ուսերուն վրայ առած է եւ որոնց ապրելու



Հ. Բ. Ը. Միութեան Տէօրք Եօլի Հիւանդանոցը

կամ փճանալու ինդիքը սոսկ Հ. Բ. Ը. Միս-  
թենէն կախում ունի :

1. Գահիրէի Տիկնանց Կեդրոնական հանդերձա-  
րան եւ աշխատանոց :
2. Սիսուան Վարժարան (2250 երկսեռ աշա-  
կերաներ) :
3. Որբանոց Վարժարան (350 երկսեռ որբեր) :
4. Այրիանոց Աշխատանոց :
5. Սիսուան Պօյ Սքառութներ (210 հետազօտիչ-  
ներ) :
6. Դամասկոսի Հայուհեաց Ապաստանարան  
(120 այրիներ ազատուած թուրք հարէմ-  
ներէն) :
7. Տէօրթ Եօլի Քէլէկէան Որբանոց (200 որբեր)
8. Մերսինի Հիւանդանոց-Դարմանատուն (դար-  
մանուած են 2500էն աւելի հիւանդներ) :
9. Տարսոնի Հիւանդանոց-Դարմանատուն :
10. Դամասկոսի Հիւանդանոց-Դեղարան :
11. Տարսոնի կտաւի արհեստանոց :
12. Ատանայի դորքի եւ դուլպայի արհեստանոց :
13. Մերսինի որբանոց (400 որբեր) :
14. Մուսուլի որբանոց (100 որբեր) :
15. Հայէպի Արհեստանոց :
16. Տէօրթ Եօլի Հիւանդանոց :
17. Զօք Մարգուլանի Որբանոց :
18. Ուրֆայի Որբանոց :



Հ. Բ. Ը. Միուրբեան Մերսիկի Որբանոց-վարժարան, ուսուցչ. կազմ եւ հիւրեր:

Այս 18 հաստատութեանց հազարաւոր տո-  
լարներու ընթացիկ ծախքէն դուրս՝ Հ. Բ. Ը.  
Միութիւնը ղրկած է եւ կը ղրկէ նպաստներ ուր  
որ հրամայողական պէտքը կոչ կընէ :

### ԻՆԶՊԵՍ ՀԵՏԵԻՆԱԼ ՏԵՂԵՐԸ


|                                                 |               |
|-------------------------------------------------|---------------|
| 1. Դամասկոսի տարագրեանքներուն                   | \$8,625.00    |
| 2. Հալէպի                                       | » » 17,085.00 |
| 3. Մերսինի եւ Ատանայի                           | » 21,925.00   |
| 4. Տէրայի                                       | » » 4,000.00  |
| 5. Իսկէնաէրունի                                 | » » 2,000.00  |
| 6. Երուսաղէմի                                   | » » 1,000.00  |
| 7. Մալաթիայի                                    | » » 1,500.00  |
| 8. Հայֆայի, Ալեքիայի եւ<br>Տիպերիայի            | » » 2,030.00  |
| 9. Սիւրիոյ գաղթականներուն                       | 5,000.00      |
| 10. Զէյթունի վերաշինութեան, ներ-<br>գաղթի առթիւ | 2,500.00      |
| 11. Կեսարիոյ աշրիններուն և որբերուն             | 1,500.00      |
| 12. Գահիրէի աղէտեալներուն                       | 1,285.00      |
| 13. Զանազան կարօտ անհատներու                    | 4,340.00      |
| 14. Այլեւայլ նպաստներ                           | 5,545.00      |
| 15. Մարաշի աղէտեալներուն                        | 7,500.00      |
| 16. Այնթապի                                     | » 12,425.00   |
| 17. Տէօրթ Եօլի                                  | » 1,280.00    |
| 18. Հասան Պէյլիի                                | » 525.00      |

---

Համագումար \$100,065.00

Սոյն գրամական նպաստներէն ի գատ, որ  
մէկ մասն է վերջերս տրուած օգնութեանց,

Մայր Հայրենիքի զանազան վայրերու կարօտե-  
լոց շրկուած են նաեւ հակերով հանդերձեղէն,  
ուտելիք, դեղորայք եւ ուրիշ այդ կարգի պի-  
տոյքներ, որոնց արժէքը եղած է աւելի քան  
150,000 տոլար :



Հ. Բ. Ը. Միութեան Քէլէկեան Որբանոցի Ուսուցչական Կազմը :

Այս վիթխարի եւ վսեմ ազգասիրական գործը շարունակելու համար, Հ. Բ. Ը. Միութիւնը պէտք ունի քու օգնութեանդ :

ՊԻՏԻ ԶԼԱՆԱՊԱՅՆՆԵՐ :

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՈՐԾԷ ԼԱԽԱԳՈՅՆ ԿԵՐՊՈՎ

Գիտե՞ս որ Հ. Բ. Ը. Միութեան գործունէութիւնները արժանացած են ամենաբարձր գնահատութեանց որոնց մասին տրուած են հետեւեալ վկայութիւնները :

«...Եթէ այսքան ցաւերու մէջ սփոփանքի դոյզն պատառիկ մը կարելի է որոնել, այն ալ Բարեգործականն է, որ ի ժամու եւ ի տարածումու կը հասնի, ուր ցաւ եւ արտասուք կայ :

«Բարեգործականը Հայ տառապակիր ազգին համար Աստուածային իրակտն նախախնամութիւնն է, չեմ չափազանցեր եթէ ըսեմ Աստուծոյ գթութեան եւ ոգորմութեան իսկական մի պատկերն է :

«Որչափ որ այսօր Բարեգործականը աշխարհի ամէն անկիւններուն մէջ իր անդամներն ու Մասնաճիւղերը ունի, շատ աւելի սփոփարար պիտի ըլլար եթէ ԱՄԷՆ ՀԱՅ անդամակցէր եւ կամ աշակերտէր բարիք գործելու այս մեծ դպրոցին» :

ՎԵ ՀԱՓԱՌ ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԿԻԼԻԿԻՈՅ




Հ. Բ. Ը. Միութեան «Սիսուան» Պոլ Սֆաութներու բախօրը

«Հօր եւ առողջ ազգերը աւելի կը գեղեցկանան, կ'ազնուանան ու կը զօրանան՝ տառապանքի բովէն անցնելով: Այս ճշմարտութեան եթէ ոեւէ ութիշ ապացոյց չըլլար, Քէլէկեան Որբանոցի հրաշալի Հայ տղեկները՝ իրենց արտակարգ կենսունակութեամբ, ուշիմութեամբ, աւիւնով, սիրտի բաւէին զայդ հաստատելու:

«Երկու շաբաթը զոր անցուցի այս Որբանոցին մէջ, աղգասիրական հրճուանքի անմոռանալի վայելք մը եղան ինծի համար, տեսնելով Փիզիքական ու մտաւոր առուգութիւնը Հայութեան այս հատընտիր զաւակներուն, զմայլելով անոնցմէ շատերուն մէջ փայլող գեղարուեստական ձիրքերուն վրայ, նկատելով անոնց ամէնուն շնորհազեղ կորովը, առողջ զուարթութիւնը, յաղթական ինքնավստահութիւնը:

«Հաւատքը՝ զոր միշտ ունեցած եմ Հայ ցեղին մեծ ապագային վրայ՝ աճեցաւ ու զօրացաւ իմ մէջս:

«Այդ տղոց հոգեկան ու մարմնական այս աստիճան զարգացման, ինչպէս եւ անոնց ամէնուն վրայ երեւցող կարգապահութեան, մաքրութեան, բարեկրթութեան, անոնց ազնիւ եւ վայելուչ վարմունքներուն մէջ, Որբանոցին խղճամիտ եւ կորովի տեսուչին՝ Ահարոնեան «Հայրիկ»ին, խնդավառ ու անձնուէր ուսուցիչ-



Տէօրք եօլի ֆէլէկեան Որբանոցի «Եօյ Սփարթնէրը, Մարգիչն ու Ֆրանս. հրամանատարը

ներուն եւ Բարեգործականի Որբանոցներու մշտաթափառ, անխոնջ, ու կաթողին առաք-  
եալին, Նաթանեան «Հայրիկ»ին դերը մեծա-  
պէս զգալի է, եւ արժանի ամէն ազգասէր Հա-  
յու շնորհապարտութեան ու շնորհաւորու-  
թեանց» :

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Տ. Եօլ, 30 Յունուար 1921

\* \* \*

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կատարելապէս վստահելի հաստա-  
տութիւն մըն է : Կը մտադրեն քանի մը ընդար-  
ձակ որբանոցներ հաստատել : Հարկաւ զուք  
կ'ըմբռնէք այս Հայերու ազգայնական սուր ո-  
ղին, զոր ո՛չ մի Ամերիկացի իրաւունք ունի այ-  
ստանելու» :

ՃԵՅՄՍ Հ. ՆԻՔԸԼ

(Մէյնըր Տէփիւքի Քըմիշընըր)

Պէյրուք, Յունիս 16, 1919

\* \* \*

«Հ. Բ. Ը. Միութիւնը ներգայիս կը տա-  
րածուի Եգիպտոս, Սիւրիա, Պաղեստին եւ Կի-  
լիկիա :

«Ուրախատիթ է դիտել թէ առնոք ընդհան-  
րապէս կը զործեն աշխարհի վայրէր, ուր մենք  
ներկայացուցիչներ չունինք» :

ՏՕՔԹ. ՓԻԹ

\* \* \*

«Պարզապէս հիանալի է այն դործունէութիւնը զոր ձեր Բարեգործական կազմակերպութիւնը յառաջ կը տանի Հայաստանի եւ ուրիշ վայրերու մէջ, եւ որու շնորհիւ հազարաւորներ ստոյգ մահէն կ'ազատուին, կը խնամուին, կը կրթուին եւ այնպիսի վիճակի մը մէջ կը դըրուին՝ որով կարող պիտի ըլլան ապագայ ազատ Հայաստանի հիմնաքարերն ըլլալու» :

ՏՕՔԹ . ԼԻՆՔԸՆ ՈՒԸՐԹ

\* \* \*

«Ուր որ Հ . Բ . Ը . Միութիւնը իր ոտքը դրած է , հոն այլեւս մեզի ընելիք դործ չէ մնացած» :

ՆԻՅՐ ԻՍԹ ՐԻԼԻՖԻ ՊԱՇՏՕՆԵԱՅ ՄԸ

\* \* \*

«Հայկ . Բարեգործականը ամենուրեք իւր անուան համապատասխան դործերովը կը փայլի , որուն մի նմոյշն ալ ի Մերսին այցելելու եւ տեսնելու բաղձն ունեցայ : Հիւանդանոցի մաքրութիւնը , լոռութիւնը եւ կարգապահութիւնը ամէն գովեստի արժանի է» :

ՊԵՏՐՈՍ ԵՊ . ՍԱՐԱՃԵԱՆ

ՄԷՐԱԻՆ , 25 Հոկտ . 1919

\* \* \*

«Այն համողման հասած էի որ , Որբանոցներու դործին մէջ մենք Հայերս անկարող ենք

Բարեգործականի Հակաի Մ. Գիւղէն որբեգրութեան Ներաւանան վարժարանի աշակերտները



սեւէ լաւ բան ընել եւ կատարեալ կազմակերպութիւն մը յառաջ բերել: Մէրսինի Հայ Բարեգործականի Որրանոցը իմ այդ գծախառն համոզումս խախտեց: Պէտք է ուրեմն յուսալ որ, երբ պարտահանաչ եւ սիրտ ունեցող Հայեր, ի'նչպէս են անշուշտ այս Որրանոցին գեկավարները, գործի գլուխ անցնին, մենք ալ կրրնանք Եւրոպական կատարելութեամբ որրանոցներ ունենալ:

«Որրանոցները մեր սպառնալի հասարակութեան օրրաններն են եւ կ'արժէ որ մեր աստճնակարդ ուժերը զրադին այս գործով:

«Բոլոր սրտովս կը ջնորհաւորեմ Մէրսինի Որրանոցին Տնօրէնը, եւ ջնորհակալ եմ այն հաճելի զգացումին համար, որ Որրանոցին այցելութիւնը ինձ ներշնչեց»

ԶԱՊԷԼ ԵՍԱՅ ԵԱՆ


Մէրսին, 31 Մարտ 1920

\* \* \*

«Սոյն փոքրիկ հիւանդանոցը երկու անգամ այցելեցի, աստճին անգամ 1919 Յունիս 19ին եւ երկրորդ անգամ այսօր, 25 Հոկտ 1919, եւ երկու անգամին ալ չափազանց դժմացի տիրող մաքրութեան, կարգ ու կանոնին եւ հիւանդներու հանդէպ տածուած հոգածութեան մասին:

«Ի սրտէ կը ջնորհաւորեմ Հ. Բ. Ը. Միութիւնը, որուն այս տիպար Հիւանդանոցը պատիւ կը բերէ ինչպէս Միութեան նոյնպէս ազ-

Հ. Բ. Ը. Միտրեան Աշխատանոց




դին, եւ ջերմ գոհունակութիւնս կը յայտնեմ  
Հիւանդանոցի մեծ ու փոքր բոլոր աշխատա-  
ւորներուն» :

Ամբողջ Հայաստանի Պատուիրակութեան  
Լիազօր Ներկայացուցիչ

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Մէրսին, 25 Հոկտ. 1919



Հ. Բ. Ը. Միտլերի Դամասկոսի Հիւանդանոցին մէջ  
վիրաբույժական գործուղութիւն մը

«Մեծ հաճոյքով դիտեցի տեղւոյս Հայկ. Բարեգ. Ընկերութեան թէեւ համեստ բայց շատ մաքուր ու մեծ խնամքով պահուող Հիւանդանոցը, եւ հեռանում եմ հիանալի տպաւորութեամբ»:

6 Յունիւ. 1920

Ա. ՇԻՐՎԱՆԶԱՏԻ

\* \* \*

«Բարեգործականը, իրաւամբ կրնայ պարծիլ, իր նպաստներուն ժամանակին, վայրկեանին կարենալ հասցնելու կաղմալերսլութեամբը: Սիս, Օսմանիյէ, Հասանսէյէ, Սուէտիա, Պաղէ, Հօրանիյէ եւ բոլոր աշխատակները վերջին չէթէական շարժումին, անխտիր, առանց յարանուանական խտիրի, վսյելեցին Բարեգործականին բարիքները: Անոնք եղան երկինքին ցօղը, նօթի եւ սլասքեալ մերազնեայ կարօտելոց»:

ՔՆՆԻՉ Տ . Հ . ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

\* \* \*

«Եկայ, տեսայ եւ կ'երթամ: Սակայն երթալէ առաջ, անգամ մ'ալ խուզարկու նայուածքս կ'ուղղեմ Հ . Բ . Ը . Միութեան Տէօրթ Եօլի Քէլէկեան Որբանոցի երկու հարիւրի մօտ սաներուն վրայ: Սրտի անհուն հրճուանօք կը դիտեմ միամեայ շրջանի մը մէջ Որբանոցին ցոյց տուած հսկայաքայլ յառաջդիմութիւնը: Այս կըթուած եւ մարզուած ծաղիկ սաներուն մէջէն կը տեսնեմ տառապեալ ցեղիս շողշողուն ապաղան: Ուրեմն կը կրկնեմ, եկայ, տեսայ եւ կը մեկնիմ յուսալից»:

ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Տէօրթ Եօլ, 16 Օգոստ. 1920

\* \* \*



Հ. Բ. Ը. Միուրեան Ատանայի Գորգի Արևեստանոցը

«Իմ բոլոր տեսած որբանոցներու մէջ միշտ  
գիտած եմ որ Հ. Բ. Ը. Միութեան Որբանոց-  
ները զգալիօրէն լաւ կազմակերպուած են, եւ  
առնոց չարքին մէջ Տէօրթ Եօլի Քէլէկեան Որ-  
բանոցը տիպար որբանոց մը գտայ :

«Արդար ըլլալու համար պէտք է ըսեմ որ,  
այս բոլոր առաւելութիւնները մեծ մասամբ  
կրնայ վերագրուիլ պաշտօնեաներու, որոնք  
խղճի մտօք կը կատարեն իրենց պարտականու-  
թիւնները» : ՌՈՒԲԵՆ ՀԵՐԵԱՆ

Տէօրթ Եօլ . 22 Օգոստ . 1920

\* \* \*

«Աւելի նուիրական, աւելի ազնուական  
հասաստութիւն չեմ կարծեր որ գոյութիւն ու-  
նենայ քան Մէրսինի Բարեգործականի այս Որ-  
բանոցը, ուր երեք անգամ թանկագին բազմ  
ունեցայ Որբերուն հիւրն ըլլալու եւ ամէն ինչ  
մօտէն տեսայ ու տարեցայ : Ասիկա հայկական  
մշտանորոգ անմահ կորուիլն, կենսալից գեղա-  
սէր ու շինարար հոգւոյն պատասխանն է Մոն-  
կոյեան զաղանութեան երեսին նետուած : Մա-  
հարեր ահեղ խորշակէն, զոր բռնաւորը մեր  
ազգին վրայ արձակեց, արդարութեան յաղթա-  
նակին շնորհիւ ազատած այս բոլոր տխրեղծ  
մանկիկները՝ հոս իմաստուն, անձնուէր ու ան-  
խոնջ հոգածութեան մը տակ զմայլելի վերա-  
փրթթում մը ունեցեր են, Հայ շնորհի, Հայ  
աւիւնի, Հայ պարկեշտութեան, Հայ աշխատա-

սիրութեան պաշտելի բուրաստան մը կազմեր են, կեանքով, ուժով, գեղեցկութեամբ, զընուարթութեամբ լեցուն:

«Այստեղ մտնողը Հայ ազգին ապագային վրայ աւելի հաւատաւոր կը դառնայ: Պայծառ հայելիին մէջ, զը այս առողջ մթնոլորտին ծոցը կազմաւորուող փոքրիկ Հայերն ու Հայուհիները կը պարզեն, մեր ցեղին մաքուր հոգին աւելի եւս գեղեցիկ ու հզօր կը տեսնենք: Այսպէս պէտք է ըլլայ առոյգ, զուարթ, պարկեշտ, կարգապահ, աշխատասէր, հայրենիքի ու ասատեաժային արդարութեան ազնուացուցիչ գաղափարներուն երկիւղածօրէն յարած, մենք պէտք է աշխատինք որ այսպէս ըլլայ վաղը մեր բովանդակ նոր սերունդը ազատագրուած Հայաստանին մէջ, երբ դայն խեղդող մղձաւանջը, որ ժամանակաւոր է փարատի:


«Որբանոցին սլաղաւակն տեսուչը, անձնուէր ուսուցչութիւնը, ազնիւ խնամակալութիւնը արժանի են երախտադէտ շնորհաւորութեանց»:

Ա. ԶՊԱՆԵԱՆ

Մէքսիկո, 9 Յունուար 1921

\* \* \*

«Իմ տեսած Որբանոցների մէջ Կովկասում, Կիլիկիայում եւ Սիւրիայում, Զոք-Մարզուանի Հ. Բ. Ը. Միութեան Որբանոցը միակն է, որ գործում է օրինակելի եւ սքանչելի մեխանիզմով:



«Մտաւոր զարգացման աշխատանքը օրգանապէս կապուած է մարմնակրթանքի եւ առողջապահական նախանձախնդրութեան հետ, այնքան լաւ՝ որ Ամերիկեան կաղմակերպութեամբ հիմնարկուած մի հաստատութեան տպաւորութիւն է ստանում այցելուն:

«Դիտեցի երեխաներին ե՛ւ իրանց զրասեղանների վրայ ե՛ւ Պօյ-Սքաւտական մարզադաշտում. անհունօրէն հրճուում եմ, որ թշնամու դնդակների սպառնալիքի ներքեւ, Հայ որբը առողջ մտքով, առողջ մարմնով իրա քաղաքակրթական միասիան է կերտում, անվհաս պայծառատեսութեամբ: Այսպիսի որբանոցներից է որ Հայ արշալոյսը պիտի ծագի:»

ԲԺ. ԵՐՈՒԱՆԴԻ ԽԱԹԱՆԱՍԵԱՆ  
Տէօրթ Եօլ, 5 Յուլիս 1920

\* \* \*

«Տեսայ Հայ Բարեգործական Միութեան Մէրսինի Որբանոցը: Գտայ թէ երկսեռ որբերը կ'առաջնորդուին դէպի գործնական կեանք: Կ'ապրին մեծ եւ խաղաղիկ ընտանիք մը կազմած: Ուշագրաւ էր՝ պարկեշտութիւնը որով համակուած էին իրենց մաքուր մքջավայրին մէջ»:

Մէրսին, 21 Սեպտ. 1920

Խ. ԳՌՈՒԶԵԱՆ

\* \* \*

«Շատ լաւ տպաւորութիւն գործեց իմ վրայ որբանոցին տեղւոյն մաքրութիւնը, դասարան-

Քարե դարակալի Գրիգորի աշխատանքի վարպետը Եւ շինութիւն գործերու մեղմը



ներու օղակէտութիւնը, փոքրիկ մանուկներու  
յաջող մարդանքները եւ այն շնորհքը որ կը  
ցայտէ ամէն մէկուն խօսքէն, նայուածքէն եւ  
բարեկիրթ շարժումէն: Ամէն օր աւա-  
նատես կ'ըլլամ Հայ ցեղին հիանալի յատկու-  
թեանց մէկ նոր երեսօթին եւ կը փափաքիմ  
որ անոր հաղորդակից ըլլան նաեւ իմ ազգա-  
կիցներս»:

(Թարգմ. Անգլ.)

ՊԱՅՐԸՆ Մ. ՆՈՒՆ

Մէրսին, 15 Յուլիս 1920

\* \* \*

«Ի խոր սրտէ կը շնորհաւորեմ Բարեգոր-  
ծականն եւ իր սլաշտօնեաները որ այսպիսի լաւ  
կառավարուած, կարգադրուած մաքուր Որբա-  
նոց մը ստեղծած են»:

ՏՈՔԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Մէրսին, 21 Սեպտ. 1920

Եթէ վկայութեանց այս ցանկը շարունա-  
կենք՝ պիտի ստիպուինք խոշոր գիրք մը գրել:

Այս գործը որ սոսկ քու սիրած ազգի փրկ-  
կելու եւ բարձրացնելու նպատակով յառաջ կը  
տարուի այնպիսի արդիւնաբերութեամբ մը՝  
որ թէ օտարներու եւ թէ քու ազգակիցներու  
բարձր գնահատութեանց արժանացած է, գրեւ  
ի՞նչ որոշման պիտի հանգեցնէ:

ՊԻՏԻ ԹՈՂՈՒՄ ՈՐ ԱՅՍ ՀԱՃԵԼԻ ԲԵՌԸ

ՄԻԱՅՆ ՈՒՐԻՇՆԵՐԸ ԿՐԵՆ:



Հ. Բ. Ը. Միուրեան Դամասկոսի ձրի Դեղարան

## ՈՒՇԱԳՐԱԻ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ: Ուշի ուշով եւ ծանրապէս կարգայ հետեւեալ հակադրութիւնները:

Կարգաւէշ լիւրջ հինգ րոպէի չափ ԼՐՁՈՒԹԵԱՄԲ ԽՈՐՀԷ:

Ա. \* «Անոնցմէ (Հայերէն) եւ ոչ մին ողջ

---

\* ԾԱՆՕԹ.— Բոլոր հրահանգներն ու հեռագիրները թարգմանուած են «Մէմբրիգ ավ Նաիմ Պէյ» գըրքոյկէն:



Հ. Բ. Ը Միութեան Տէօրք եօլի  
Քէլէկեան Որբանոց

Թողուցէք, մասնաւորապէս փոքրիկ մանուկները, որոնք կարճ ատենէն մեծնալով՝ պիտի փորձեն իրենց վրէժը լուծել» :

«Թուրք Կառավարութեան Հրաման»

Բ. «Մենք չուտով կանցնինք : Այս մատաղ սերունդին կը մնայ շէնցնել վաղուան Հայաստան, եւ լուծել մեր դարաւոր Վրէժը :»

ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ



Հ. Բ. Ը. Միութեան «Գէլէկեան» Ռըբանցիւն  
պատկերասրահ

\* \* \*

Ա. «Մինչեւ անգամ այս ժողովուրդին (Հայերուն) նորածին մանուկներն ալ ոճրագործներ են, որովհետեւ իրենց մէջ պիտի սնուցանեն վրէժխնդրութեան սերմերը: Եթէ կուզէք մեր ապագան ապահովել՝ սպաննեցէ՛ք անոնց մանուկները»:

ԶԵՔԻ ՊԵՅ

(Տէր Զօրի կոտորածի վարիչը)

Բ. «Փրկեցէք մեր որբերը, առանց անոնց  
Հայը կորսուած է . . . .» :

ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ  
(Մահուան անկողնի մէջ)

\* \* \*

Նոյ . 5, 1915

Ա. «Մեզի կը տեղեկացուի թէ, Սերաս-  
տիոյ, Խարբերդի, Տիգրանակերտի եւ Կարնոյ  
Հայերուն փոքրիկները որոնք իրենց ծնողաց  
մահուամբ որբ մնացած են, կարգ մը թուր-  
քերու կողմէ ներս կառնուին եւ կը պահուին  
իբրեւ ծառաներ :

Ձեզի կը հրամայեմ որ զանոնք ամբողջու-  
թեամբ հաւաքելով՝ անմիջապէս դէպի անա-  
պատները քշէք :»

(Հեռագիր)

Ներքին Գործ. Նախարար  
ԹԱԼԷԱԹ

---

Բ. «Մենք կ'երթանք կոր ահա, մեր ետեւ  
կը մնան 400,000 անտիրական որբեր, փրկեցէ՛ք  
զանոնք ազգը փրկած ըլլալու համար» :

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ  
(Մահուան նամբուն վրայ)

\* \* \*

Սեպտ. 21, 1915

Ա. «Պէտք է որբանոցներ ունենալ, ժա-  
մանակ է որ զգացմամբ տարուինք եւ որբեր  
կերակրելով անոնց կեանքերը երկարցնենք :

«Ղրկեցէք զանոնք դէպի անապատները եւ  
արդիւնքը մեղի տեղեկացուցէք» :  
( Հեռագիր )

ԹԱԼԷԱԹ

---

Բ. «Որբանոցները մեր ապագայ հասարա-  
կութեան օրբաններն են եւ կ'արժէ որ մեր ա-  
ռաջնակարգ ոյժերը զբաղին այս գործով» :

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

\* \* \*

Յունվար 26 , 1915

Ա. «Կը լսենք թէ՛ կարգ մը որբանոցներ  
Հայոց որբեր եւս ներս կ'առնեն... Կառավա-  
րութիւնը այսպիսի որբերու կերակրուիլը եւ  
անոնց կեանքերու երկարացուիլը բոլորովին հա-  
կառակ կը նկատէ իր ծրագիրներուն եւ նպա-  
տակին :

«Կը յանձնարարեմ որ այդ մանուկները որ-  
բանոցներու մէջ չ'ընդունուին , եւ անոնց հա-  
մար մասնաւոր որբանոցներ հաստատելու ոեւէ  
փորձ չ'ըլլայ» :

( Հեռագիր )

ԹԱԼԷԱԹ


---

Բ. «Որբեր պահելու եւ պատսպարելուն ձեր  
գաղափարը հիանալի է : Հայկական Դատի ամ-  
բողջ ապագան այս որբերէն կախեալ է» :

ԳՆԴԱՊԵՏ ՊՐԷՄՕՆ

Կիլիկիոյ Ընդհանուր Վարիչ

Յունվար 23 , 1916



Հ. Բ. Ը. Միութեան «Միտում» վարժարանի եւ Մանկավարժի 2250  
աշակերտներու բանակը

Ա. «... Պէտք չէ աւելորդ ծախքերու ենթարկուելով կերակրել Հայոց որբերը որոնք ապագային մեզի նեղութիւն պատճառելէն ի դատ՝ ոեւէ նպատակի պիտի չի ծառայեն»:

ԹԱԼԷԱԹ

---

Բ. «Հայ որբերը Հայ մաքուր արեան արիւրներն են, անոնք են որ պիտի վերահաստատեն մեր ազգին տոհմային առողջ եւ հոյակապ յօրինուածքը, եւ պիտի վերակազմեն նոր Հայաստանի ուժեղ սերունդը»:

ԲԱՔԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

\* \* \*

Ա. «Սաստիկ ցուրտի ժամանակ որբերու տարազրութիւնը կատարելով՝ անոնց յաւիտենական հանգիստը կ'ապահովենք»:

ԹՈՒՐԲ ՊԱՇՏՈՆԵԱՅ ՄԸ

---

Բ. «Մեր որբերը Հայաստանի հիմնաքարերն են եւ մեր նահատակներուն կտակները, փրկեցէք զանոնք»:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐԻԱՐԺ

\* \* \*


Ա. «Հաւաքեցէք բոլոր Հայ մանուկները... աշխարհի ձեռով մը որ կասկած չ'արթնցուի, փճացուցէք զանոնք եւ արդիւնքը հաղորդեցէք»:

(Հեռագիր)

ԹԱԼԷԱԹ

---

Բ. Ասոր պատասխանն ալ դուն տուր.....  
Ի՞նչ պիտի ըսես, ըսելէն աւելի ՈՐՈՇԵՍ.....



Հ. Բ. Ը. Միութեան «Սիսուան» Պոլ Սխուրակը, (մարզանքի առթիւ)

Այս հակադերութեանց առաջինները յայտարարած են քու ցեղիդ ամենաոխերիմ թշնամիները :

Իսկ երկրորդները նոյն ցեղը անկեղծօրէն սիրող թէ՛ օտար՝ եւ թէ՛ անոր հարազատ զաւակները :

Անոնց վրայ լաւ մը խորհրդածէ՛ . . .

Անտարբեր գտնուելովդ՝ կ'օգնես թշնամիիդ քու ցեղին փճացմանը համար հետապնդած ծրագիրներուն եւ նպատակներուն :

Իսկ Հ. Բ. Ը. Միութեան աջակցելով՝ կ'օգնես այդ ծրագիրներու եւ նպատակներու փճացումին եւ ցեղիդ յաւերժացումին :

Ի՞նչ պիտի ըլլայ որոշումդ :

ԶՈՐՆ ՊԻՏԻ ԸՆՏՐԵՍ :

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ ՈՒԽՏԸ

«Մենք հպարտութիւնն ունինք այսօր մեր ահուի տանջանքին, որով անգամ մըն ալ վերածնանք Աղղին եւ Հայրենիքին համար :

«Մենք աշխատեցանք ի դերեւ չի հանել մեր զաստիարակութեան ջամբուած ամէն ինամք եւ հոգածութիւն, եւ այսօր երբ ինծի կը տրուի արտայայտել իմ եւ բոլոր ընկերներուս զգացումները, հպարտօրէն եւ ճակատաբաց անդըրժելի խոստումը կ'ընեմ ասպագային :

«Հայրենիքին աւերակներուն վրայ պիտի բարձրանայ մեր կեանքին անվկանդ կոթողը ու

մեր ոտքին տակ, լսեցէ՛ք, արդէն իսկ, տրոփի՛ւնը քաջայաղթ՝ սերունդներու ծառացումին :

«Իզուր պիտի չանցնի երբեք մեր ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն նուիրական գործը, եւ լոյսի ամէն կայծ մեր մտքին մէջ արշալոյս մը պիտի ըլլայ :

«Կեցցէ՛ Հ. Բ. Ը. Միութիւնը :

«Եւ կեցցէ՛ Հայրենիքը որուն կարմիր եւ յաղթապանծ դրօշին տակ ԱՅՍՕՐ Կ՝ՈՒԽՏԵՆՔ ՄԵԾՆԱԼ ԻՐԻԵՒ ՀԱՅԿԻ ՈՒ ՎԱՀԱԳՆԻ ԿՈՐԻՆՆԵՐ :»

ՍԱՆՈՒՆՔ ԵՒ ՍԱՆՈՒՀԻՔ

Հ. Բ. Ը. Միութեան Բօր-Սայիտի Որբանոցի

---

Վսե՛մ եւ սրտկառելի՛ ուխտ մըն է այս :  
Զայն հայրենիքիդ զաւակներուն այսպէս ուխտել տալը Հ. Բ. Ը. Միութեան գործն է :

Այս դերազանցապէս հայրենասիրական ուխտը յառաջ բերելու գործին մէջ, դուն ունէրաժին ունեցա՞ծ ես :


Եթէ այո, պատի՛ւ քեզի : Շարունակէ աւելի եռանդով :

Իսկ եթէ ոչ, ՍԿՍԷ ԱՅՍՕՐ :

Աւելի երկար մի զրկեր ինքզինքդ այդ հայրենաչէն գործին մէջ բաժին մը ունենալու հաճոյքէն եւ պատիւէն :

Աջակցութիւնդ մի ուշացներ :

ՎԱՂԸ ԿՐՆԱՅ ՇԱՏ ՈՒՇ ԸԼԼԱԼ :



Տէօրք Եօլի Պօյ Սֆառութները իրենց Մարզիչ Տիար Համագապ փանոսեանի ինտ:

Քու քաղաքիդ մէջ կամ անոր մօտերը կը գտնուի Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղ մը, ՃԻՇՏ ՀԻՄԱՅ արձանագրել տուր ինքզինքդ իրրեւ այդ Մասնաճիւղի մէկ անդամը :

Այս գեղեցիկ պարտականութեան մէջ բաժին մը առնելու պայմանները չա՛տ դիւրամատչելի են :

Անոր իրրեւ մէկ լման անդամ կրնաս ըլլալ, վճարելով միայն մէկ տոլար մուտք եւ 3 տոլար տարեկան : Օրական մէկ սէնթէն պակաս : Այսչափ չնչին է Հ. Բ. Ը. Միութեան քու վրայ դրած նիւթական պարտքը :

Այս գումարէն աւելի վճարելը՝ բոլորովին քու կամքիդ կը ձգուի :

\* \* \*

Առանց սպասելու, այս գրքոյկին վերջը գտնուած թիւ 1 կտրոնը լեցուր եւ պէտք եղած գումարին հետ զրկէ քեզի ամենամօտ գտնուած Մասնաճիւղի վարչութեան :

---

Մի մոռնար զնել «ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿԱԳԻՆ ՄԸ» որոնք կը ծախուին Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղերու կողմէն :

Անոնք գեղեցիկ են եւ զանազան գոյներ եւ գիներ կը կրեն :

## ԱՅԴ «ՓՐԿԱԳՆԵՐՈՒ»

|       |           |     |    |    |         |    |      |
|-------|-----------|-----|----|----|---------|----|------|
| 5.00  | տողարնոցը | որք | մը | կը | կերակրէ | 1  | ամիս |
| 15.00 | »         | »   | »  | »  | »       | 3  | »    |
| 30.00 | »         | »   | »  | »  | »       | 6  | »    |
| 60.00 | »         | »   | »  | »  | »       | 12 | »    |

Ասոնցմէ հատ մը գնելով կ'ապացուցանես թէ՛ Հայ յորբին կեանքը քու ստացուածքէն նախամեծար կը համարես :

ԱՍԻԿԱ ԱՆՂ ՊԱՏԻՒ ՄԸՆ Է :

«ՓՐԿԱԳՆ» մը ունենալու համար, գրքոյ-կին վերջը դառնուած թիւ 2 կտրոնը լեցուր եւ պէտք եղած գումարին հետ զրկէ ամենամօտ Մասնաճիւղի վարչութեան :

Յիշէ թէ ՀԱՅ ՈՐԲԸ ԿԵՐԱԿՐԵԼՈՎԴ՝ ՈՒԽԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՒԴ ԿԱՄՔԻՆ ՃԻՇԴ ՀԱԿԱՌԱԿԸ ԿԸ ԳՈՐԾԵՍ :

ՄԻՇՏ ԱՊԱՀՈՎ ԵՍ, ԵՐԲ ԶԵՍ ԸՆԵՐ ԱՅՆ՝ ԻՆՉ ՈՐ ԹՇՆԱՄԻՒԴ ԿՈՒԶԷ ՈՐ ԸՆԵՍ :

ԹՇՆԱՄԻՒԴ ԿԱՄՔՆ Է ՈՐ ՀԱՅ ՈՐԲԸ ՄԵՌՆԻ :

ՔՈՒԿԴ..... Պատասխանէ գործովդ.....

ՀԱՅ ՈՐԲԻՆ ՄԱՀՈՒԱՆԸ ՄԷՋ ԹՇՆԱՄԻՒԴ ՇԱՀ ՄԸ ԿԸ ՏԵՍՆԷ :

ԴՈՒՆ..... Պատասխանէ դրամովդ..... :

Հ. Բ. Ը. Միութիւնը շնորհակալութեամբ  
պիտի ընդունի ուրիշ ոեւէ նուիրատուութիւն  
որ պիտի բարեհաճիս ընել :

Այս նպատակին համար, հաճէ դրօշակին  
վերջը գտնուած թիւ 3 կտրոնը լեցնել եւ որո-  
շածդ գումարին հետ զրկել հետեւեալ հասցէին :

**The Armenian General Benevolent Union**

530 Old South Bldg., Boston 9, Mass.

**ԱՅՍ ԴՐՔՈՅԿԸ ԿԱՐԴԱԼԵՂ ՎԵՐՁ**

**ՈՒՐԻՇԻ ՄԸ ՓՈԽԱՆՑԷ**



## ԹԻԻ 1

Թուական .....192

Հ. Բ. Ը. Միութեան .....

Մասնանիւղի վարչութիւն,

Հանեցէ՛ք արձանագրել զիս իբրեւ Մասնանիւղի մէկ անդամ, որու համար կը ներփակեմ \$ :

Այս գումարին \$ , անցուցէ՛ք Մուտփիս հաշւոյն եւ \$ , Տարեվճարիս :

Անուն .....

Փողոց .....

Քաղաք ..... Նահանգ .....

## ԹԻԻ 2

Թուական ..... 192

Հ. Բ. Ը. Միութեան .....

Մասնանիւղի վարչութիւն,

Հանեցէ՛ք անմիջապէս ինծի դրկել \$ -  
նոց «ՓՐԿԱԳԻՆ ՄԸ» որու փոխարժէքը կը ներփակեմ :

Անուն .....

Փողոց .....

Քաղաք ..... Նահանգ .....



ԹԻԻ 3

Թուական . . . . . 192

Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի

Կեդրոնական Յանձնաժողով,

Ներփակ կը դրկեմ \$ , Հ. Բ. Ը.  
Միութեան նպատակներուն գործածուելու հա-  
մար :

Անուն . . . . .

Փողոց . . . . .

Քաղաք . . . . . Նահանգ . . . . .

---

*Բոլոր չէքերը գրուելու են Հ. Բ. Ը. Միու-  
թեան հրամանին, այսպէս՝*

Pay to the order of The Armenian  
General Benevolent Union.

*Եւ ղրկուելու են հետեւեալ հասցէին :*

530 Old South Bldg., Boston 9, Mass.



# ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶՈՐՍ ՇՐՋԱՆԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

ՆԻԻ ԻՆԿԼԵՆՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ — ՊՈՍԹՈՆ

|                   |                    |
|-------------------|--------------------|
| Յ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ     | Ատեմապետ           |
| ԱՀԱՐՈՆ ԳԵՈՐԳԵԱՆ   | Փոխ-Ատեմապետ       |
| Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ   | Ատեմադպիր          |
| ԱԲՐԱՀԱՄ ՊՈՂԻԿԵԱՆ  | Փոխ-Ատեմադպիր      |
| ԲՕԼ ՊԵՏՐՈՍԵԱՆ     | Գանձապետ           |
| Կ. Պ. ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ | Հաշուակալ          |
| ՄԻՀՐԱՆ ԳՈՆՏԱԶԵԱՆ  | Խորհրդական         |
| Յ. Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ | Քարտուղար - Գործիչ |

ՆԻԻ ԵՈՐՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ — ՆԻԻ ԵՈՐՔ

|                 |                    |
|-----------------|--------------------|
| Կ. Յ. ՓԱՅԷԼԵԱՆ  | Ատեմապետ           |
| Մ. ՎԱԳԱՍԵԱՆ     | Փոխ-Ատեմապետ       |
| ԳՐ. Ա. ՊԱԼԹԱԵԱՆ | Ատեմադպիր          |
| Ղ. ՊՕՅԱՃԵԱՆ     | Գանձապետ           |
| Գ. ՔԻԻՐՔՃԵԱՆ    | Խորհրդական         |
| Յ. ՐԱՖԱՅԷԼԵԱՆ   | »                  |
| Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ   | »                  |
| Տ. ՎԻՇԱՊԱԶՈՒՆ   | Քարտուղար - Գործիչ |

ՄԻՋԻՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ - ՇԻՔԱԿՕ

|                       |                    |
|-----------------------|--------------------|
| ՏՕՔԹ. Լ. Պ. ՄՈՒՂԱԼԵԱՆ | Ատեմապետ           |
| Մ. ՊԱԼՕԵԱՆ            | Փոխ-Ատեմապետ       |
| Մ. ՄԷՍԹԻՃԵԱՆ          | Ատեմադպիր          |
| Լ. ԿԻԼԵԱՆ             | Փոխ-Ատեմադպիր      |
| ՅՈՎՀ. ՊԷԶԱԶԵԱՆ        | Գանձապետ           |
| ՍՍՐԳԻՍ ԹԷՐԶԵԱՆ        | Խորհրդական         |
| Կ. ՄԷԼԻՔԵԱՆ           | »                  |
| Ա. Ս. ՆԱՃԱՐԵԱՆ        | Քարտուղար - Գործիչ |

ՔԱԼԻՖՕՐՆԻՈՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ — ՖՐԷՋՆՕ

|                               |                    |
|-------------------------------|--------------------|
| Տ. ԹԵՈԴՈՐՈՍ ՔՀՅ. Ռ. ԻՍԱՀԱԿԵԱՆ | Ատեմապետ           |
| ՎԵՐ. Կ. Մ. ՄԱՆԱՎԵԱՆ           | Փոխ-Ատեմապետ       |
| Մ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ           | Ատեմադպիր          |
| ՏՕՔԹ. Վ. Գ. ԹԱՇՃԵԱՆ           | Փոխ-Ատեմադպիր      |
| Գ. Մ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ              | Գանձապետ           |
| Վ. ՇԱՀՊԱԶԵԱՆ                  | Խորհրդական         |
| ՅՈՎՀ. ԷԼՄԱՍԵԱՆ                | »                  |
| ԳՐ. ՍԱՐԱՖԵԱՆ                  | Քարտուղար - Գործիչ |

THIS BOOK IS DUE ON THE LAST DATE  
STAMPED BELOW

AN INITIAL FINE OF 25 CENTS  
WILL BE ASSESSED FOR FAILURE TO RETURN  
THIS BOOK ON THE DATE DUE. THE PENALTY  
WILL INCREASE TO 50 CENTS ON THE FOURTH  
DAY AND TO \$1.00 ON THE SEVENTH DAY  
OVERDUE.

MAR 17 1935

MAR 18 1935

JUN 07 2001

Gaylord Bros.  
Makers  
Syracuse, N. Y.  
PAT. JAN. 21, 1908

U. C. BERKELEY LIBRARIES



C047021894

470357

UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY

